



### ԳՈՐԾԱԴՈՒԼ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Պետությունն անկախ հաստատություններում և վարչություններում աշխատակողմերում և պաշտոնյաներում գործադուլը շարունակուեցաւ երէկ, եւ անոր երրորդ օրը գորակազան գործադուլ կատարեց նաեւ ընկերային ապահովագրութեան ազգային սնտուկի սենտիքան:

Անկախ վարչություններու սենտիքայի նախագահ Ֆուատ Հարֆուզ երէկ հաւաստեց, որ ելեկտրակա-նութեան ընկերութեան աշխատակողմերը պիտի շարունակեն իրենց բաց գործադուլը: Ընկերութեան կեդրոնատեղիին առջեւ աշխատակողմերու կատարած երէկուան նստացոյցին խօսք առնելով, Հարֆուզ ըսաւ, որ կանգ առած են նորոգութեան աշխատանքները, եւ սենտիքան կրնայ դիմել մագլցողական քայլերու:

Հարֆուզ ըսաւ, որ իրենց պահանջները քննարկելու համար նախարարական յանձնախումբ կազմելու կառավարութեան նախանցեալ օրուան որոշումը ընդունելի չէ, նկատի առած որ այդ պահանջներուն գծով բանակցութիւններ կատարուած էին աշխատանքի նախարարին միջնորդութեամբ, եւ այդ բանակցութիւններուն զոյացած միջին լուծումները ընդունած էին ուժանիւթի նախարարը, պետութեան հետ հարցերու ատեանն ու պետութեան պաշտօնէութեան հարցերու խորհուրդը:

Աշխատակողմի սենտիքաներու ազգային համադաշնակցութեան նախագահ Թանիս Անտարուս հարողագրութեամբ մը նոյնպէս քննադատեց նախարարաց խորհուրդի որոշումը:

### ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԸ ԵՐԱՇՆԱԿՈՐԱԳԻՆՈՎ ԱՋԱՏ Կ'ԱՐՁԱԿՈՒՆ

Պէյրութի աւագ քննիչ դատախաչ Հարֆու Մատի երէկ ընդառաջեց էլեկտրակախութեան ընկերութեան բաժանումներում ութ տնօրէններու երաշխաւորագինով ապատ արձակուելու դիմումներուն: Անոնցմէ իւրաքանչիւրին անձը կ'ընթաց 300 հապար լիքանանեան ոսկիի երաշխաւորագին:

Արգելափակուած պաշտօնէաները կը մեղադրուին պետական գումարներու մսխումի եւ պարտականութեան մէջ թերացումի յանցանքներով:

Նկատի առած, որ վերոյիշեալներէն եօթն երկրաչափներ են, էլեկտրակախութեան ընկերութեան երկրաչափները գումարեցին ընդհանուր ժողով մը, երկրաչափներու սենտիքայի նախագահ Մամիր Տունիթի ներկայութեան, քննարկելու համար իրենց պաշտօնակիցներու արգելափակումը: Ժողովի ատեն անոնք իմացան իրենց պաշտօնակիցներու ապատ արձակումը:

### ՄԱԿ ՆՇԱՆԱ ԿԵՅ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԸ...

Շարունակուած Ա. ԷջԸ

ամերիկացի պիւնտր մըն ալ վիրաւորուեցաւ: Իսկ հարաւային Քեյմստն նահանգին մէջ, ամերիկացի պիւնտրներ եւ անոնց աֆղան դաշնակիցները եօթը հոգի ձերբակալեցին, որովհետեւ անոնք Պըն Լատէնի նկարները ունէին իրենց տուններուն մէջ: Փաշտուն ղեկավար մը ըսաւ, որ մարդիկ մտահոգ են այսպիսի արարքներով, որովհետեւ ձերբակալուածները ոչ թալէպան էին, ոչ ալ «Քալիտա»ի անդամ, անոնք պարպապէս աֆղաններ էին:

ՅՐԱՆՍԱՅԻ պաշտպանութեան նախարար Ալէն Ռիշար ըսաւ, որ Փարիզ պարզապէս պիտի կանգնի Աֆղանիստանի մէջ բազմապեզան խաղաղարար ուժերու հրամանատարութիւնը թուրքի վստահելու առաջարկին: Ռիշար աւելցուց, որ Փարիզ կը հաւատայ, որ Անգարա յանգոյնս պատրաստ է ստանձնելու այս պարտականութիւնը:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Նախագահութեամբ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ Առաջնորդ Լիբանանի Հայոց թմին

### Կազմակերպութեամբ՝ ԱՋԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Կը բանախօսէ՝ ՊՐՆ. ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

### Մասնակցութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՍԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 7 Փետրուար 2002ին, երեկոյեան ժամը 7:00ին, Յակոբ Տը Մելքոնեան սրահին մէջ:

ՇՐԱԽԵՐ

### ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, 14 Յունուար 2002ին Ղարթա մահացած

### ԿԱՐԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ ԹՈՓԱԼԵԱՆԻ

հոգիին համար պիտի մատուցուի Ա. պատարագ եւ պիտի կատարուի հոգեհանգստեան պաշտօն:

Պիտի պատարագ՝ ԳԵՐՊԾ. Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

Պիտի քարոզէ՝ ԳԵՐՊԾ. Տ. ԳԵՂՈՐԳ Թ. Ծ. Վ. ԵՂԻԱՅԵԱՆ

Կիրակի, 27 Յունուար 2002, ժամը 11:00ին, Հազմի, Միքեայեան վարժարանի «Ա. Աստուածածին» մատրան մէջ:

Իրենց հօր վախճանումին՝ գերաւ. Շ. Յովսէփ վրդ. Թոփալեան եւ գերաւ. Շ. Ստրոպ վրդ. Թոփալեան ցաւակցութիւնները կ'ընդունին իրենց վարժարանին մէջ՝ Կիրակի, ժամը 12:00էն 13:30 եւ երեկոյեան 5:00էն 8:00, Երկուշաբթի, 28 Յունուար 2002, ժամը 10:00էն 13:00 եւ երեկոյեան 5:00էն 8:00:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԹՈՐՈՍ ԱՌԱՍԼԻՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱՎԱԳԵՄԻԱ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՆԴԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՈՅ

### ՍՎԱՆԱԿ ԵՒ ՍԻՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍԱՄԵՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Աշխատանոցի առաջին համոզիպումը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 4 Փետրուար 2002ին, Նշան Փալանձեան ճեմարանի մէջ, Ղոբաք Էլ Պլաք:

Մանրամասնութեանց համար հեռաձայնել թորոս Ռոսլին Կերպարուեստի Ակադեմի, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3:00էն 6:00, իսկ Շաբաթ օրերը ժամը 11:00էն 4:00, հեռուեալ թիւերուն՝ 01-265899 եւ 01-249375:

ԾԱՆՕԹ. Կառատունը ապահովուած:

Թ. ԱՌԱՍԼԻՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱՎԱԳԵՄԻԱ

### ԷԼԻ ՀՐԴԵՅՔԱՅԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԸ

Համար: Հաղորդագրութիւնը նաեւ դատապարտեց քաղաքական նպատակներ վայրագ արարքներով հետապնդելու ոճը, մանաւանդ կոյր ականահարուներով Հաշուեյարդարները, որոնք կարեւորութիւն չեն ընծայր անմեղներու կեանքերուն: Համայնավար Կուսակցութիւնը հաղորդագրութեամբ մը նկատել տուաւ, որ արարքը հարուած մըն է Լիբանանի կայունութեան ու արարական եւ միջազգային բարձրաստիճան տողովներ հիւրընկալելու նախապատրաստութեան:

### ՇՕՇԱՓԵԼԻ ՓԱՍՏԵՐ ԶԿԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԸ

փելի փաստեր չունին, թէ Իսրայէլ կը կանգնի նախարար Էլի Հըպէյթայի սպանութեան ետին, բայց Գիւրա կարելի է ենսել, թէ ո՞վ կ'օգտուի այս ոճիւրէն:

«Եթէ այս դէպքը պատահէր ասկէ տասը տարի առաջ, այսօր կրակոցներ, անցարգեներ եւ կռիւ պիտի ըլլար, իսկ մարդիկ սպաստանարաններու մէջ պիտի գտնուէին. բայց այսօր ոչինչ կայ, ինչպէս որ կրնաք անձամբ հաստատել», ըսաւ նախագահ Լահուս, աւելցնելով, որ «Եթէ խաղաղութիւն կայ, ներքը թուներ պիտի ըլլան»:

Ան նկատել տուաւ, որ ներքին կայունութեան անխախտ մնալը ցոյց կու տայ, որ Լիբանան հասած է տնտեսական իր ապագինումին անհրաժեշտ կայունութեան:

Միւս կողմէ, նախագահ Լահուս ողջունեց «Ռոյթթըր»ի Լիբանանի գրասենեակը շրջանային կեդրոնատեղի եւ մարզումի կեդրոն դարձնելու քայլը, որ կը հաստատէ, թէ Լիբանան ոչ միայն ապահով եւ կայուն է, այլեւ ժողովրդավարական ազատութիւններու երկիր:

Նախագահ Լահուս երէկ նաեւ ընդունեց գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէն, որ Ամմանի մէջ Յորդանանի Ապտալա Բ. թագաւորին յանձնած էր արարական վեհաժողովին ներկայ գտնուելու նախագահ Լահուսին հրաւեր մը:

Համատէն նախագահ Լահուսի յաւանքը, որ Յորդանանի թագաւորը ներկայ պիտի գտնուի վեհաժողովին, մանաւանդ որ Արաբական Լիգայի նախագահութիւնը պէտք է ինք յանձնէ Լիբանանի նախագահին:

Համատէն նախագահ Լահուսի նաեւ ներկայացուց պաղեստինցի նախարար Եասէր Ապտ Մապպուի հետ իր հանդիպումին արդիւնքները. պաղեստինցի ղեկավար Եասէր Արաֆատի յղուած իրաւունքները ստանձնելով, Ապտ Մապպու հաստատեց, թէ Արաֆատ վճռած է ներկայ գտնուիլ վեհաժողովին:

### ՀԱՅՐԵՆԻ ՋԱՒԱԽՔ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մէկ ապգ Վարանդ Փափագեան Ախալքալակի պայքարը Բուրճէն Տաշիրի գաւառին բռնագրաւումը Բուրճէն Ընդհանուր ակնարկ Հայաստանի հիւսիսային սահմանների վրայ Աշոտ Մելքոնեան Ջաւախքիները արեւմտահայ պատմագրական պայքարում Աշոտ Մելքոնեան Ախալքալակի հայ համայնքին պատմութիւնը Փրոֆ. Կ. Գ. Ղաֆաղբեան

Տանջուած ժողովուրդի մը շքանալ հայրենիքը՝ Ջաւախք Վ. Աւագեան Արցախեան պատմութիւնը Նահատակները

Հոգեւոր եւ կենսական կեանքը Ջաւախքում Աշոտ Մելքոնեան Նորօրեայ հոգեւոր կեանքը հինաւուրջ Ջաւախք աշխարհում Սանասար սարկաւազ Ղուկիկեան Ջաւախքի մշակութային կեանքը

Ջաւախքի գեղանկարչներու եռեակը Հայկազուն Ալվրցեան Մովսէս Ծիրանի Ջաբար Բէշիշեան

Ջաւախքի աշուղները Նշանաւոր ջաւախքցիներ Ջաւախքի կրթական համակարգը Եու. Նաւոյեան Հայ մամուլը եւ գրատպութիւնը Ջաւախքում եւ Մեխիթրում Վահան Մաղապեան Բաց դարպաս՝ սահմանէն անդին

Ջաւախքի պատմական յուշարձանները Մամուլէյ Կարապետեան Վրաստանի քաղաքականութիւնը հայկական մշակութային կոթողների նկատմամբ Մամուլէյ Կարապետեան

Հայ - վրացական փոխ յարաբերութիւնները Բուստով Հայ - վրացական կնճիղը Արշակ Ջամայեան Մէնք եւ մեր հարեանները Արտաշէս Արեղեան Հայ - վրացական յարաբերութիւնները ժամանակակից փոփոխումները Մերգէյ Շաբաբեանց

Վրաստանի անկախութեան աղբիւրը եւ հայ - վրացական յարաբերութիւններու հեռանկարը Բիչըրտ Կիրակոսեան Խաչիկ Տէր Ղուկասեան

Թիֆլիսի հայութիւնը Օֆելիա Գրիգորեան - Շահբազեան Արխայիայի հայկական համայնքը

Արարական հանգոյց Հայկազուն Ալվրցեան Վրաց քաղաքական մտեցումները Ախալքալակի - Ախալքալակ գոտու մահմեդական բնակչութեան խնդրի անշնորհեմը Մամուլէյ Կարապետեան

Ռուսաստանի համագործակցութիւնը Բուստով Հայ - վրացական փոխ յարաբերութիւնները Բուստով Օ. Ս. Բելով

Չէչենական խնդիրը վրաց - ռուսական յարաբերութիւններում Մամուլէյ Կարապետեան Թուրքիա - Վրաստան - Արաբեան փոխ յարաբերութիւնների հեռանկարի հարցի շուրջ

Վրաստանի եւ ԱՄՆի յարաբերութիւնները Էդուարդ Ղազարեան Վրաստանի արտաքին քաղաքականութեան կերպարանափոխութիւնները Ս. Ա. Միխայլով

Հայոս եւ Քարթլոս Սերգէյ Շաբաբեանց Լէոնտի Մրոզիկի Ընդհանուր տեղեկութիւններ Ջաւախքի մասին

**365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ**  
Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը 300 տոլարով:  
Տէր եւ տիկին Ղոնիքեան եւ Սոսի Մեմուրեան (իրենց հօր եւ մօր՝ Սարգիս եւ Էլպիս Մեմուրեաններու յիշատակին) 27 Յունուար:

**ԼՕԻԻ ԾՐԱՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**  
**ՅԻՇԱՏԱԿԻ ՊԱՇՏԱՍՈՒՆԸ ԸՆԿԸ. ԾՈՎԱԿ ԽԱՉԵՐԵԱՆԻՆ**  
Հայ Անտարազգային Էմմանուէլ Եկեղեցւոյ մէջ, Փիթըր եւ Էլիզաբէթ Թորոնթոն վարժարանին կից, Կիրակի, 27 Յունուար 2002, առաւօտեան ժամը 10:00ին, պաշտամունքի ընթացքին:

**ՄԱՀԱԶԴ**  
Տիկին Նորա Վարդապետեան կը գուժէ իր մօր՝

**ԷԼՕԻԶ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆԻ (Ծնեալ՝ ՍԻՍՈՆԵԱՆ, 1910ին)**

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 24 Յունուար 2002ին:  
Թաղման պաշտամունքը կատարուեցաւ Ուրբաթ, 25 Յունուար 2002ին. հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Պուրճ Համուտի Հայ Աւետ. գերեզմանատունը:

●Ներկայս ընդունիլ իրբե մահագր:  
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին տիկին Նորա Վարդապետեանի բնակարանը, Ռաս Պէրլուք, Քարաքասի վայրէջք, «Ռիմ» սիւնթրմարքէթի շէնք, 7րդ յարկ, հեռ. 01-741591 Շաբաթ 26, Կիրակի 27 եւ երկուշաբթի 28 Յունուարին:

**ՄԱՀԱԶԴ**

Թրիփոլիի Ս. Հոգեգալուստ եկեղեցւոյ թաղական խորհուրդը կը գուժէ բաղական խորհուրդի իր երկարամեայ անդամներէն:

**ՆՇԱՆ ԴԱԻԹԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Միացեալ Նահանգներու մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:  
Հանգուցեալին հոգուոյն համար, հոգեհանգրատեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Յունուար 2002ին, Թրիփոլիի Ս. Հոգեգալուստ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

**ՄԱՀԱԶԴ**

Տիկին Սաբուրեհի Մալեան Տէր եւ տիկին Յակոբ Մալեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Գրիգոր Մալեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յակոբ Պեքերեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներհօր եւ հարազատին:

**ՅՈՎԱԿԻՄ ՄԱԼԵԱՆԻ (Ծնեալ՝ 1919ին)**

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 25 Յունուար 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկուելու ժամը կ'ընդունուին պիտի կատարուի Շաբաթ 26 Յունուար 2002, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայս ընդունիլ իրբե մահագր:  
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Պուրճ Համուտ, Սահբըր Արիմի դիմաց, Ա. յարկ, Շաբաթ 26, Կիրակի 27 եւ երկուշաբթի 28 Յունուարին:

### ԻՐԱՆԻՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ԱԼԻԵԻ

Ազրպեյճանի նախագահ Հայտար Ալիևը Յունուար 23-ին ընդունեց Իրանի ներքին գործոց նախարար Ապտիլուլահի Մուսաուրի Լարիի գլխավորած պատուիրակը, որ Ազրպեյճան կ'այցելի: Հանդիպումին ընթացքին Ալիևը յայտարարեց, որ երկու կողմերը հետագայում կ'արգելեն վերաբերյալ կարծիքները լայն քննարկումին համար անհրաժեշտ է համատեղ աշխատանք:

Նախարար Լարի Ալիևի փոխանցեց Իրանի նախագահ Մոհամադ Նաթանուրիի ուղերձը: Այն յայտնեց, որ Թեհրան կը սպասէ Ալիևի պաշտօնական այցելութեան, որ հաւանաբար տեղի ունենայ Փետրուար ամսուան երկրորդ կէսին: Լարի նաեւ յայտնեց, որ Ազրպեյճանի հետ յարաբերութիւններու վերաբերյալ կարգաւորումը Իրանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթ խնդիրներէն է: Այն նաեւ կարեւոր նկատեց Իրանի եւ ազրպեյճանցի պաշտօնատարներու փոխադարձ աւելցնելու ներքին կողմերուն միջոց փոխ շահահատ գործակցութիւն ստեղծելու հեռանկարով:

### ԸՍՏ ՌՈՒՍԻՈՅ ԳԱՂՏՆԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԵՏԻՆ

#### ՊԵՐԵՉՈՎԱԿԻ ԿԸ ՖԻՆԱՆՍԱԿՈՐԷ ՉԵՉԵՆՆԵՐԸ

Ռուսիոյ գաղտնի սպասարկութեան պետը Հինգշաբթի օր յայտնեց, որ իշխանութիւնը վատտեր ունի, թէ հանրաժանօք առեւտրական Պորիս Պերեպոլսկի կը ֆինանսաւորէ Չեչենիոյ անջատողական ըմբոսները:

«Քէյ. Ճի. Պի.»-ի կապուած գաղտնի սպասարկութեան մէկ բաժանմունքի պետ Նիքոլայ Փարուշեւ լրագրողներուն յայտնեց, թէ Չեչենիոյ վերականգնման համար թղթածրար մը պատրաստութեան ընթացքի մէջ է եւ պիտի յղուի օտար երկիրներու պետութիւններուն:

«Տեղեկութիւններ ունին», որ բազմաթիւ համաձայնութիւններ գոյացած են անջատողական պիւնտներու խմբակները ֆինանսաւորելու նպատակով. այդ համաձայնութիւնները անմիջականօրէն առնչուած են Պերեպոլսկիին», ըսաւ Փարուշեւը:

Պերեպոլսկի նախկին նախագահ Պորիս Ելցինի մօտիկ խորհրդականներէն էր, որ նախագահ Փուտինի ընդդիմադիրներէն հռչակած էր ինքզինքը, երբ «Քէյ. Ճի. Պի.»-ի նախկին տնօրէնը դարձեալ պաշտօնի կոչուած էր: Պերեպոլսկի կ'ապրի արտոյրի մէջ. Արեւմտեան Եւրոպայի մէջ. ան կ'ըսէ, թէ տուն վերադարձը վտանգներով լեցուն է եւ վախ կը պատճառէ իրեն:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՄՈՍԿՈՒԱ ԴԵՄ Է ԻՐԱՔԻ ՎՐԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ՍԸ ԳԱՂԱՓԱՐԻՆ

### Կ'ԸՍԵ ԻԿՈՐ ԻՎԱՆՈՎ

Ամերիկեան օդանայնաւոր Հինգշաբթի գիշեր ուժեղացնելու Իրաքի օդային պաշտպանութեան ուժերու կեդրոն մը, այն պահուն, երբ ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը կը յայտարարէր, որ Պաղատատի համար ծառանակը սկսած է սահիլ՝ ՄԱԿի վէճի քննիչներու վերադարձը արտօնելու որոշումին համար:

Ամերիկացի բարձրաստիճան պիւնտրական մըն այլ պոռտուաճումի հրաւեր ուղղեց Իրաքի, զիտեղ տայով, որ անիկա չի կրնար շահագործել առիթը՝ օգտուելով Աֆղանիստանի իրադարձութիւններէն: Օդուժի հրամանատար Վոր. Ռիչըրտ Մայրը ըսաւ, որ ամերիկեան ուժերուն կեդրոնացումը Աֆղանիստանի օդանայնաւոր ստիկա չ'ենթադրէր, թէ անոնք չեն կրնար հակադարձել իրաքեան ապօրինի արարքներու: Մայրը ակնարկեց, որ անցնող էրք օրերուն ընթացքին, ամերիկեան ուժերը քանի մը անգամ ուժեղացնելու իրաքեան պիւնտրական ղեկավար, ուրիշ կրակ բացում էր ամերիկեան օդանայնաւորներու վրայ: Մայրը շեշտեց, որ ամէն անգամ, որ վտանգ կը սպառնայ ամերիկացի օդայնութեան, կրակ արձակող իրաքեան ղեկավարը պիտի ուժեղացնէ իր արարքները:

### ՌՈՒՍԻԱ ԿԸ ԶՈՒԹԱՅՆԵ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՈՒՄԵՐԸ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով յայտնեց, որ Մոսկուա դէմ է Իրաքի դէմ ամերիկեան պիւնտրական անոր գործողութեան մը: Իվանով քայլ մը անդին երթալով պահանջեց, որ Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցները վերցուին:

Իվանով, որ կը խօսէր Իրաքի փոխ վարչապետ Թարեք Ալիպի հետ ունեցած տեսակցութեան մը աւարտին, ըսաւ, որ սիւսի կ'արձակուի Իրաքի դէմ պայքարը պէտք է հաստատուի օրինական ամուր հիմքերու վրայ եւ թէ ՄԱԿ պէտք է համապարփակ ղեկավարէ:

տօնատարը զիտեղ տուաւ նաեւ, որ որքան ժամանակը անցնի, այնքան Իրաք առիթը կ'ունենայ նոր պէնքեր պատրաստելու: Ան ըսաւ, որ անցնող էրք տարիներուն, Իրաք առիթը ունեցաւ վէճերու պատրաստութեան ձեռնարկելու:

Իրաք կ'ընդունի, որ պատերազմէն առաջ ձեռնարկած էր կենսաբանական պէնքերու պատրաստութեան ծրագիրը մը, որ սակայն ներկայիս գոյութիւն չունի, որովհետեւ փճացում է ՄԱԿի քննիչներուն կողմէ:

### ՌՈՒՍԻԱ ԿԸ ԶՈՒԹԱՅՆԵ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՈՒՄԵՐԸ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով յայտնեց, որ Մոսկուա դէմ է Իրաքի դէմ ամերիկեան պիւնտրական անոր գործողութեան մը: Իվանով քայլ մը անդին երթալով պահանջեց, որ Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցները վերցուին:

Իվանով, որ կը խօսէր Իրաքի փոխ վարչապետ Թարեք Ալիպի հետ ունեցած տեսակցութեան մը աւարտին, ըսաւ, որ սիւսի կ'արձակուի Իրաքի դէմ պայքարը պէտք է հաստատուի օրինական ամուր հիմքերու վրայ եւ թէ ՄԱԿ պէտք է համապարփակ ղեկավարէ:

## ՀՆԴԿԱՍՏԱՆ ՓՈՐՉԱՐԿԵՅ ՄԻՋՅԱՍՄԱՐԱՍԱՍԱՅԻՆ ՀՐԹԻՌ ՍԸ

Հնդկաստան երկէկ ուժի ցուցադրութիւն կատարեց՝ փորձարկելով միջամաքամասային հրթիռ մը, որ կորեկային գլուխ կրելու կարողութիւնը ունի: Հրթիռին փորձարկումը անմիջապէս դատապարտուեցաւ Փաքիստանի կողմէ:

Նիւ Տելէի յայտնեց, որ փորձարկած է «Ալկի» հրթիռին աւելի կարճ հասողութիւն ունեցող մէկ տարբերակը: Արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Նիրուփամա Ռասա ըսաւ, որ հրթիռին փորձարկումը Պենկայի Մոցին մէջ տեղի ունեցած է թեքմիք պատճառներով: Ան շեշտեց, որ փորձարկումը քաղաքական որեւէ պատգամ չ'ուղղեր եւ միջուորտ հրահրելու համար չէ:

Վարչապետ Աթալ Պետարի Վաճիպի իր կարգին ըսաւ, որ փորձարկումը շահեկան կը նկատուի Հնդկաստանի ապահովական տեսանկիւնէն դիտուած: Մեկնաբաններ սակայն դիտել կու տան, որ փորձարկումը իր ճշդութեամբ թուականներ մէկ ամիս յառաջադելու քայլով՝ Նիւ Տելէի կ'ուզէ Իսլամապատի հասկցնել, որ պէտք է ընդառաջէ ծայրայեղական իսլամականները ձեռնարկելու պահանջին, այլապէս՝ Հնդկաստան պատրաստ է պատերազմելու:

Փաքիստան անմիջապէս հակադարձեց խիստ ոճով դատապարտելով հրթիռին փորձարկումը, զիտեղ տայով, որ անիկա կը սպառնայ շրջանային ապահովութեան:

Նախագահ Փերվէզ Մուշարրաֆի բանբերը՝ Գոր. Ռաշիտ Գուրեշի կոչ ուղղեց միջազգային ընտանիքին ճշտում բանեցնելու Հնդկաստանի վրայ, որպէսզի մեղմացնէ լարուածութիւնը: Գուրեշի ակնարկեց, որ Իսլամապատ ուժի ցուցադրութեան մրցումը մը պիտի չ'ամանակցի սահմանակից Նիւ Տելէի հետ:

● ԲԻՐԻՏԱՆԻԱ ցաւ յայտնեց, որ Հնդկաստան փորձարկած է միջամաքամասային հրթիռ մը: Արտաքին գործոց նախարար Ճէք Սթրո ըսաւ, որ յիշեալ արարքը կը սրէ լարուածութիւնը շրջանի մը մէջ, ուր արդէն միջուորտը չ'ափագանց լարուած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ԿԻՊՐՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾՐԱԳՐԷ ՓՃԱՑՆԵԼ ԶԷՆՔԵՐ

ՆԻԿՈՍԻԱ, 25 (ՌՈՅԹԸՐԸ) - Յոյն կիպրական կառավարութիւնը յայտնեց, որ կը ծրագրէ փճացնել զէնքեր՝ իրեն ձեռք թուրք կիպրացիներուն հանդէպ, որովհետեւ կիպրոսի տագնապի լուծման նպատակով բանակցութիւնները արդէն սկսած են յառաջդիմել:

Զէնքերը, որոնք 1972-ին ներածուած են պետութեան կողմէ, ՄԱԿի խաղաղարար ուժերու հսկողութեան տակ կը գտնուին, հետեւաբար ՄԱԿ պէտք է իր հաւանութիւնը տայ զէնքերը փճացնելու յոյն կիպրական կառավարութեան որոշումին: Այս գծով արդէն իսկ խօսակցութիւնները սկսած են ՄԱԿի պաշտօնատարներուն եւ պետութեան միջեւ:

«Զէնքերը թէեւ հին են, սակայն տակաւին կարելի է գործածել գանոնք: Բացեալ այդպէս կառավարութիւնը որոշած է գանոնք փճացնել», յայտնեց պետութեան մէկ պաշտօնատարը:

Զէնքի պահեստը, որ պիտի փճացուի, կ'ընդգրկէ 4,500 քայաշիթով զնդաքիները, որոնք ներածուած են նախկին Զեխտոյրովաբիայէն:

**ՀԱՅ ԱՐՈՒԵՏԱՍՊԵՏՆԵՐՈՒ  
ՀԱՄԱՄԲՈՒՄ  
220  
ՏԵՍԱԵՐԻՉԻ ԵՐԵԿՈՅ**

Հոռոմ - Հայաստան ցուցահանդէսի, կայացած Մարտ - Յուլիս 1999ին, Վատիկանի Մատենադարանի մեծ սրահին մէջ

Երկուշաբթի, 28 Յունուար 2002, ժամը 7:00ին

«Garden Tower» պանդոկին մէջ  
Հեռ. 04-41 7741  
www.gardentowerhotel.com/MondayForum.htm

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

**Շ. Ե. Ը. Ի ՍԱՐՁԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵԸ**



Հինգշաբթի, 24 Յունուար 2002 թուականին, ներկայութեամբ Շ. Ե. Ը. Ի Վեդրոնական Վարչութեան, մասնաճիւղերու գործադիր մարմիններու անդամներուն եւ մարզական վարչութեան պատասխանատուներուն, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն հանդիպում մը Շ. Ե. Ը. Ի Սեմիոնովի Վեդրոնի մէջ, որուն ընթացքին Շ. Ե. Ը. Ի Վեդրոնական Վարչութեան ատենապետը՝ արք. Կարո Ճըղըւեան վիճակահանութեան պարգեւը (2001ի FORD Focus ինքնաշարժը) յանձնեց՝ բախտաւոր թիւը (485) կրող տոնիկ տիրոջ՝ Յարութիւն եւ Իշխան Կ. Սարգիսեաններուն:

Այս առիթով, Յարութիւն եւ Իշխան Սարգիսեան եղբարք, 5,000\$ նուիրատուութիւն մը կատարեցին Շ. Ե. Ը. Ի Սարգիսեան շարժումին:

Կը շնորհակտեմք բախտաւոր եղբայրները եւ բարի վայելում:

**ՅՈՐԴԱՆԱՆՑԻ ԴԻԻԱՆԱԳԷՏԻ ՍԸ  
ԻՆՔՆԱՇԱՐԺԻՆ ԴԷՄ  
ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԱՐՔ**

Աթէնք, 25 (ՌՈՅԹԸՐԸ) - Անձանօթներ յորդանանցի ղեկանազէտներու մէկ ինքնաշարժին տակ ուռմը մը գետեղած են Աթէնքի մէջ, սակայն ոչ ոք վնասուած է, յայտնեց ոստիկանութիւնը:

Ռուսներ գետեղուած էր Յունաստանի մէջ Յորդանանի ղեկավարած առաջին քարտուղարին ինքնաշարժին տակ: Ինքնաշարժը ամբողջութեամբ քանդուած է:

Այս գործողութեան պատասխանատուութիւնը ոչ մէկը ստանձնեց:

Մայրաքաղաք Աթէնքի մէջ յաճախ նման գործողութիւններ կը կատարուին ձախակողմեան խմբակներու կողմէ:

**Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ  
ԸՆԿԵՐԱՅԻՆ  
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ**

Կը ներկայացնէ՝


**ՄԱՆՍՈՒՐ ՌԱՀՊԱՆԻԻ  
Թատրերգութիւնը**

Տեղի կ'ունենայ Կիրակի, 3 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Յորիւմ տը Պէրուսի» մէջ:

- Տոմսերը ստանայ «Ռոժէ Սիմոն» եւ «Միլոնա» (Ժէլ Էլ Տիպ), JACK GIFTS եւ PRONTO հաստատութիւններ (Պուրճ Համուտ):
- Մանրամասնութեանց համար հեռաձայնէլ 03-918372 թիւին:

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

**ԻՆՉՊԵՍ  
ԳՈՐԾԱԾԵՑ FUEL  
CARD-Ը**



Ձեր ինքնաշարժին պէնզինին, մագնիսին, իւրից, ինչպէս նաեւ լուսալու համար, վճարումին հետ միաժամանակ ներկայացուցեք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

**ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ  
FUEL CARD-Ը**

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-

- ԱՅԿԻԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
- Կամ մագնիսի գրախանութ, Պուրճ Համուտ
- Գրատուն Caravelle, Չալաք
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէրուս
- Obelix հաստատութիւն, Անթիլիաս

**Յաւելեալ մայրամասնութեանց համար հեռաձայնէլ՝ 01-242556 թիւին:**

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնէլ՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

**ՔԱՐՏԸ  
ԿԸ ՍՍԱՆԱԸ  
ՉՐԻՕՐԵՆ**

**ՎՐԾԷՔԱՐՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ  
ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐՃ ՍԸ**



# ԷԱՊԵՍ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՀԱՅ ՄԵ



Աշոտ Մալաբեան մնացած է մի՛շտ Աշոտ Մալաբեան,- այսինքն՝ հայ, լուրի եւ ամբողջական: Չորս չորրորդ: Իր լեզուով, իր մտածումներով, ազգային արժեքներով եւ սրբութեամբ հանդէպ իր պաշտամունքով, այլ մահաւանդ, ամեն տեղ, նաեւ ֆրանսական շրջանակներու մէջ, իր հայ մը եղած ըլլալը յայտնելու նախաձայնողութեամբ:

## ԿԱՐՈ ԳԵՈՐԳԵԱՆ

Շուրջ չորս տասնամեակ առաջ սպիտակ բուրդին վրայ սեւով արձանագրուած այս հաստատումը «չորս չորրորդով» ամբողջական հայ Աշոտ Մալաբեանի մասին, բեկուզ մէկ - երկու նախադասութեամբ, այնուամենայնիւ, յստակօրէն կը կարկառե կերպարը այս լիիրա հայուն, որ աչքերը լոյսին բացաւ մտայն երկնակամարներու տակ, ապրեցաւ գրկանքներով ու տառապանքներով հիւսուած մանկուծիւն մը, նկարագիր եւ գիտակցութիւն կազմեց Մեծ եղեռնի ամենօրեայ անդրադարձներով եւ կեանքի մարտահրաւերները դիմաւորեց իր արիւնքն ու մոխիրներէն յարուբիւն առած հայ ժողովուրդի վերապրելու եւ յաղթանակելու վեճականութեամբ:

պողրկար ողջ աշխարհին, բայց մահաւանդ ցեղասպան բուրքին պաշտօնական ներկայացուցիչին երեսին.

- Ես ուսուցողի Յակոբ Էֆենտի Մալաբեանի տղան եմ...

Ինքնավստահ ու բարձրաճակատ, մարտունակ ու պահանջատէր հայու կտրիկ կերպար մը, որուն մասին, կը կարծեմք, բաւական յստակ պատկեր մը կը փոխանցէ Սերովբէ Միսիթարեանի «Ֆրանսերէնով արտայայտուող հայ գրողներ» անուն հատորէն քաշուած եւ քովի սիւնակներով շարժուող Վերնէօյ ստորագրութեամբ հրատարակուած հատուածը:

Ազգային արժեքներու, սրբութեան եւ անժամանցելի իրաւունքներու նկատմամբ պաշտամունքի աստիճան մարտաբարձու գիտակցութիւնը, որուն պերճախօս ապացոյցներն են քովի գոյգ հատուածները, շարունակ առաջնորդեց ամբողջականօրէն հայ շանրի Վերնէօյի կեանքի գնացքը՝ մամուլ շրջանակներէն մինչեւ եօթներորդ արուեստի ոլորտներ եւ «Mayrig» կնքեալ երգափայլիչ գլուխ - գործոցներէն մինչեւ Ֆրանսայի Գեղարուեստի Ակադեմիա, որուն «40 անմահներ»էն մէկը եւ երկրորդ հայ ակադեմիկոսը դարձաւ ինք 4 Դեկտեմբեր 2000ին, իրմէ տարի մը առաջ մահացած Գառուէն ետք: Այս իրաւութեամբ ալ ան անցաւ իրենապաշտ շնորհ յաջողութեանց գնազան հանգրուաններէն, երբ իրեն բեմադրիչ ու բեմագիր ստորագրեց շուրջ 60 շարժապատկերի ժապաւեններ եւ, Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքի արդար հաստատումով՝ «Եղաւ Ֆրանսական երազին մարմնացումը եւ իր կոթողական գործով գրեց Ֆրանսական շարժանդկարին զիջագնական բաժինները»:

Հայտն արիւնով: Հայտն տեսիլքով, գիտակցութեամբ, կենսասիրութեամբ եւ անպարտելի ճպարտութեամբ: Եւ փաստեց իր կարգին, մահաւանդ իր «Մայրիկ» գլուխ - գործոցով, որ նշմարիտ արուեստը,

## Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Շարք՝ էջ 10

# ՅԵՏՈՅ ԱԼ ԱՆՈՒԷՍ ՄՆԱՅ ՀԱՆՐԻ ՎԵՐՆԷՕՅ

«Մինչեւ որ թուրքերը չընդունին հայերու իրաւունքները եւ չստանձնեն զիջիլ հողային հատուցումները, այն խրամատը, որ բացուել է հայերու եւ թուրքերու միջեւ, երբեք պիտի չմոռոցուի ու հետզհետէ պիտի խորանայ»:

«Ես ուսուցողի Յակոբ Էֆենտի Մալաբեանի տղան եմ»:

## ՀԱՆՐԻ ՎԵՐՆԷՕՅ

1945ին, Ֆրանսայի ազատագրութեան շրջանին, երբ Համաշխարհային Երկրորդ Պատերազմը իր վախճանին կը հասնէր, միջազգային հրապարակի վրայ Հայկական Հարցը տեսակ մը այժմէութիւն ստացած էր եւ կը զգացուէր Թուրքիայէն մեր հողերուն պահանջը:

Շատ բնական էր, որ ես ալ իրրեւ լրագրող արտայայտուէի Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած հայկական հողերու ազատագրութեան հարցի մասին: Եւ այդ առնչութեամբ, «Լա Մարսէլէզ» օրաթերթին համար, գրեցի վեց մասերէ բաղկացած յօդուածաշարք մը:

Տեսնելով յօդուածաշարքին կարեւորութիւնն ու իմ հայ ըլլալու պարագան, թերթին խմբագիրը խորհուրդ տուաւ, որ այդ յօդուածաշարքը օտար անունով մը ստորագրեմ, որպէսզի հայու եւ թուրքի սովորական բանավէճի մը հանգամանքը չստանայ եւ անոր հրատարակութիւնը միջազգային հանգամանք մը ստեղծէ:

Ես ալ, բոլորովին անպատրաստ անուանափոխութեան այդ անակնկալ հարցին, իրեն ըսի.

- Ստորագրեցէք ինչ անունով որ կ'ուզէք: Ինծի համար էականը յօդուածին հրատարակութիւնն է:

Յաջորդ օրն իսկ, Հանրի Վերնէօյ ստորագրութեամբ յօդուածաշարքը սկսաւ հրատարակուիլ:

Ինչպէս որ թերթին խմբագիրը նախատեսած էր, յօդուածաշարքը հրատարակուելէն քանի մը օր յետոյ, թրքական դեսպանատունէն պաշտօնեայ մը տնկուեցաւ մեր տունը, Հանրի Վերնէօյը փնտռելով:

Անմիջապէս մեր թուրք հերթիքը դիմելով ինծի կապուելով մը հետեւեալն ըսաւ.

«Պարոն Վերնէօյ, դուք հայնապաստ յօդուածաշարք մը ստորագրած էք, որը կրնայ տարակարծութիւններ ստեղծել միջազգային «Հանրային կարծիք»ներուն մէջ, որոնցմէ մեր երկիրը կրնայ տու-

ժել: Բայց տրուած ըլլալով ձեր Ֆրանսացի ըլլալու պարագան, հաւանական է, որ դուք իրականութեան լաւատեղեակ չէք եւ ազդուելով հայերու սուտ ու փուտ պատմութիւններէն, անգիտակցաբար թիրի-մացութիւններու մէջ մտած էք: Ծիշող ատոր համար եկայ, որպէսզի այդ թիրիմացութիւնները ճշդ ենք, որոնք, ի հարկին, կրնան մեր երկու բարեկամ ազգերու փոխյարարներութիւններուն վրայ ազդել:

Այս նախապատրաստական ճառը լսելէ ետք, դարձաւ թուրք պաշտօնեային ու ըսի.

- Բարեկամ, դուք որո՞ն տունը կը հարցնես, որ էլքը ու եկեր ես մինչեւ հոս եւ կ'ուզես գրածներս սրբազրել տալ ինծի: Դուք միայն պէտք է հասկնաս, որ ես ուսուցողի Յակոբ Էֆենտի Մալաբեանի տղան եմ: Զեր՝ թուրքերու ըրածները ո՛չ մասալ են, ոչ ալ պատմութիւն: Մենք՝ արեւմտահայերս այդ բոլորը մեր կաշիին վրայ զգացք ենք, որոնք խորագիտ ու անընթաց թափանցք են մինչեւ մեր հողիններուն խորքը: Անանկ որ, բարի եղէք ինչպէս թէ՛ ձեր ժամանակը եւ թէ՛ իմինք, որովհետեւ ձեր բոլոր ճիգերը ոչինչ կրնան փոխել այն դառն իրականութենէն, որ զոյուցութիւն ունի մեր երկու ժողովուրդներուն միջեւ: Մինչեւ որ թուրքերը չընդունին հայերուն իրաւունքները, եւ չստանձնեն զիջիլ հողային հատուցումները, այն խրամատը, որ բացուել է հայերու եւ թուրքերու միջեւ, երբեք պիտի չմոռոցուի ու հետզհետէ աւելի պիտի խորանայ:

Այս լսելով, թուրք պաշտօնեան ա՛լ բան մը չըսած, կրունկին վրայ ետ դարձաւ ու գնաց, մէջ մըն ալ մէջտեղը չեկելու պայմանով:

Ահա այդ յօդուածաշարքէն յետոյ այ անունս մնաց Հանրի Վերնէօյ: Անկէ ետք ալ Փարիզ կանչուեցայ նոյն անունով եւ այդպէս ալ մնաց:

## ՀԱՆՐԻ ՎԵՐՆԷՕՅ

# Մ Ա Յ Ի Կ

5 Յունուար 1980:  
Քառասուն տարիներ անցած են արդէն քսան տարեկան տղո՞ւ այդ իմ առձրին... պարահանդէսէս ի վեր:  
Այս իրիկուն՝ հիմա կը դիտեմ այդ սպիտակ ձեռքը, որ տակաւին կը կրէ սեղի աշխատանքին պատճառած այդ հին հետքերուն ազնուականութիւնը: Իր այգքան՝ նուրբ մատներուն վրայ ամուսնական մատանին բացակայութիւնը գոհարեցութեան, անձնուրացութեան իր անընթաց զրոյշմը ձգած է:

Պիտի մեռնի, մայրիկս:  
Խաղա՛ղ, հանդարտ դէմքով մը, ազնուութեամբ, համակերպութեամբ կը դիմագրաւէ իր վախճանը: Վախճան մը, որուն պատրաստուած էր ժամանակէ մը ի վեր, այնպէս՝ ինչպէս շրջապատի պատրաստութիւն կը տեսնեն մարդիկ:

- Ութսունվեց տարեկան մէկու մը համար, - կ'ըսէ մայրս, - անպատշաճ է, ամօթ է աւելի ապրելու փափաք ունենալ:

Եւ ժպիտով, ծիծաղով, իր մեկնումէն ետք մեր ընեւիք գործերուն ցանկը կը թուէր մեզի՝ իրենց մանրամասնութիւններով, սկսած հագուստէն որ ընտրած էր, մինչեւ... բայց չէինք թողոր, որ շարունակէ:

\*\*\*

Երթունքները կը սեղմէր անոնց զոյալը զսպելու համար: Պայքարեցաւ պահ մը եւս՝ մեր հինգերուն անցեալի երջանկութեան յուշերուն, կարօտին դիմաց, յետոյ թարթիչներուն շուրջ կուտակուած արտասուքի կաթիլները սկսան սահիլ այտերն ի վար: Մօր մը աչքերէն կաթիլներ մաքուր ու ջինջ արցունքի կաթիլներ, որոնք անգամ մը գունէ, թէ՛ կուզ մէկ պահ, ձեզ Աստուծոյ գոյութեան հաւատալ կու տան:

\*\*\*

Պահելու համար իմ արցունքներս, հակեցայ շուտով բազմաթիւ կոճակներով հետաձայնի իր գործիքին վրայ եւ՝ սկսաւ այդ ամէնուն գործածութեան եղանակը բացատրել:

- Երբ թիւ մէկին վրայ սեղմես՝ սպասուհին կը պատասխանէ, թիւ երկուքը իմ գրասենեակս է, թիւ երեքը մանուկներուն յարկաբաժինն է, թիւ չորսը՝ մեծ սրահը, թիւ հինգը, վեցը, եօթը...:

Մայրս զլուրը կը ճօճէր արդիականութեան այս հրաշալիքներուն ի տես, առանց որ կարենար ոչինչ ըմբռնել: Յանկարծ դէմքը երջանկութեամբ ճառագայթել սկսաւ: Դէպի իր տունը վազող երկու պզտիկ մանուկներու ուրախութեան ճիշդը հասած էին ականջին:

- Մայրիկը եկե՛ր է...

Այդ տունը, որ մայրիկս իր «չաքարի տուփը» կոչած էր, կարասիներուն ու միւս բոլոր առարկաները տակաւին իրենց նախկին փայլքը պահած են: Կարծէք երբեք չէին գործածուած: Բազմաթուր մը մէկ բարձն է միայն, կէս - կլոր ձեւով քիչ մը փոս ինկած, որ տարիներու գործածութեան հետքը կը կրէ, ներկայութեան մը վկայութիւնը կու տայ:

Հոն, այդ բարձին վրայ կը նստէր, ընկղմած իր ի-



Հատկապէս Մանրի Վերնէօյ

# Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

«Մեր եկեղեցին, աշխարհասփիւռ հայութիւնը խոնարհուածով չհրաժեշտ տարիս հայագրի տաղանդաւոր արուեստագէտին, որ ապրեց ու գործեց հոգում միշտ կրելով հայրենիքի սէրը եւ հարազատ ժողովրդի արժէքները: Ֆրանսայի հիւրընկալ յարկի ներքոյ ծաղիկներն ու պտուղ տուեցին Հանրի Վերնէօյի հոգու շնորհները՝ բացայայտելով հայ ժողովրդի կենսահաստատ ուժը, բարիքով, արդարութեան ու նշանակութեան յաղթանակի հաւատով շարժուած մերթնէլու քրիստոնէսէի կամքը, որ մեծագոյն արտայայտութիւնն է նրա «Մայրիկ» ժապաւենը՝ Հայոց Եղեռնի մասին դեռեւս չզբարգանցուած ստեղծագործութիւն, իր համամարդկային հնչողութեամբ»:

## Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ . Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

\*\*\*

«Մեծ ցաւով ու ավստանքով տեղեկացանք ֆրանսահայ նշանաւոր բեմադրիչ, Ֆրանսայի Գեղարուեստի Ակադեմիայի անդամ Հանրի Վերնէօյի մահուան մասին: Ֆրանսական եւ համաշխարհային շարժապատկերի արուեստում իր ինքնատիպ դեմքն ունեցող արուեստագետը ողջ կեանքում՝ քե՛լ լրագրութեան, քե՛լ գրականութեան եւ քե՛լ շարժապատկերի ասպարէզներում, միշտ եղել է հայրենասիրութեան ու մարդասիրութեան

վեճ գաղափարներ դաւանող ու սերմանող գործիչ: Դրա վառ վկայութիւններն են ամենաբարձր գնահատականներն ու պարգևները, որոնց արժանացել են նրա ստեղծագործութիւնները Ֆրանսայում եւ այլուր, ինչպէս նաեւ այն մեծ ժողովրդականութիւնը, որ նա վկայելու էր հայրենիքում եւ ողջ Սփիւռքում»:

## Ո Ղ Պ Ե Ր Թ Ք Ո Չ Ա Ր Ե Ա Ն

\*\*\*

«Հանրի Վերնէօյը, ըլլալով համեստ, պատմութեան ողբերգութիւններուն ենթարկուած տարագիր ընտանիքի մը գաւազակը, յաջողած է կեանքին մօտենալ զգայուն ու գորովալի հայեացքով մը, խորապէս սիրած է իրեն ապաստան տուած երկիրը՝ Ֆրանսան եւ անոր նուիրած իր տաղանդը՝ իր ամբողջ ներութեամբ ու վեհանձնութեամբ»:

## Ժ Ա Ք Շ Ի Ր Ա Ք

\*\*\*

«Ես տխուր եմ, բայց միաժամակ՝ նաեւ գոհ, քանի որ Վերնէօյը գնաց միայնու ժամ կապէցի, Լիցօ Վեներուրայի, եւ կը կարծեմ, երջանիկ կ'ըլլայ անոնց հետ: Բայց բարեկամի մահը ցաւալի է միշտ: Բացի այդ՝ Հանրի Վերնէօյը ֆրանսական շարժապատկերարուեստի մեծերէն է, եւ կրնամ ըսել, որ իր մահուան հետ նաեւ կ'անհետանայ իմ կեանքիս մէկ մեծ մասը»:

ԱԼԷՆ ՏԵԼՈՆ

Հատկապէս Մանրի Վերնէօյ

Իսկ թոռունիկին նախընտրութեան համաձայն՝ ընկուզի ծեծուած միջուկով եփուած: Բայց իրեն համար, օրուան ամէնէն յարգի ու կարեւոր պահերը կեդրոնացած, ամփոփուած էին մեծ տան մէջ միասնաբար մեր կատարած ընթերթներու անխախտելի արարողութեան մէջ:

Կը տեսնէի զինք գրասենեակիս պատուհաններէն, երբ պարտէզին միւս կողմը կ'անցնէր տարրական իր թոռնիկին թեւին կռթնած, այդպէս ապահով: Թոռնիկն ալ ինքզինքին հովեր մը կու տար, կարծես ըսելու համար, թէ «մայրիկին ոչինչ կրնայ պատահիլ, քանի ես հոս եմ»:

Այդպէս, իր սպասելի պաշտպանութեամբ հպարտ, զանդաք բայելով, խորիտ ու յոխորտ կը քայլէր մայրս, արծաթէ կոթով իր գաւազանին ծանր կշռոյթով:

Եւ անսովոր, տարօրինակ այս զոյգը, իր սեւ շալը ուսերուն նետած, բոլորովին սպիտակած մագերով ձեր կնոջ մը, որ վարդազոյն այտերով ու կարճ տարտով մանուկի մը սեղմուած՝ կը քայլէր, պարտէզին ամբողջ կանաչներուն մէջ, վարպետ նկարիչի մը զլուխ - գործոց մէկ նկարը կը ներկայացնէր: Նկար մը, որ ամէն անգամ, ժամանակի եւ կլիմայի համաձայն՝ զոյն ու երանգ եւ լոյս կը փոխէր:

Այդ տեսարանը իմ աւօրեայի Ռընուարիս պահէի:

Պատուհանիս այդ դերքէն, պարտէզի այդ ճամբուն երկայնքին ամէն անգամ քիչ մը աւելի մօրս հիւծիքը, ձերանալը կը նշմարէի, շունչը վերագտնելու համար իր կանգ առած պահերուն միշտ աւելցող թիւը հնչուելով:

Չես զիտեր ի՛նչ պշտանք տարուած, եւ կամ իր տաղտուկները մեզմէ պահելու համար, արդարացնել կը փորձէր իր այդ կանգ առնելները, գաւազանով

## ՀԱՆՐԻ ՎԵՐՆԷՕՅ

Նեոյի - Սիւր Սէն 7 Մայիս 1985

(Հայացոյց՝ ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ)

Շարք՝ էջ 10

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

## ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՓԱՏՏԱԳՐՈՂ «ԿՄՊՈՅՏ ԳԻՐՔ»Ը ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Բրիտանական խորհրդարանը 1916ին յույս ընծայեց Լորտ ձեյմս Գրայսի հովանավորությամբ եւ անգլիացի նշանավոր պատմաբան Առնոլտ Թոյնպիլի բժանդիր աշխատանքով պատրաստուած «Օսմանեան կայսրութեան մէջ հայերուն նկատմամբ վերաբերմունքը, 1915 - 1916» գիրքը, որ առաւելաբար ծանօթ է «Կապոյտ Գիրք» անունով:


Հայկական Ցեղասպանութիւնը փաստագրող 168 տեղեկագիրներով այս գիրքին 1916ի հրատարակութիւնը ամբողջութեամբ տեղադրուած է համացանցին վրայ:

www.cilicia.com/bryce/a00tc.htm հասցեով կայքին, ինչպէս նաեւ՝ Ա. Աշխարհամարտի արխիւները ներկայացնող կայքերու մէջ:

Նշենք, որ 1916ին կատարուած այս հրատարակութիւնը ամբողջական չէ: Օրին ապահովական նկատառումներով դուրս ձգուած են մեծ թիւով վայրերու եւ անձերու անուններ:

«Կոմիտաս» հիմնարկը 2000ին հրատարակեց Արա Սարաֆեանի խմբագրած «Կապոյտ Գիրք»ին չորսընեակ եւ ամբողջական տարբերակը: Այս նորագոյն հրատարակութեան մասին մանրամասնութիւններ ստանալու համար այցելել [www.gomidass.org](http://www.gomidass.org) հասցեով կայքը:

## ԻՐՆՉՊԴԻՍ ԱՆԳԼԵՐԻՆԻ ԹԱՐԳՄԱՆԵԼ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԿԱՅՔԵՐ



Համացանցի վրայ փնտրուող կատարողներ յաճախ կը հանդիպին շահեկան տուեալներ փոխանցող կայքերու, որոնք սակայն իրենց կողմէ անհասկնալի լեզուով գրուած նիւթեր կը պարունակեն: Նման կայքերու պարունակութիւնը անգլերէն լեզուի թարգմանելու համար կարելի է օգտագործել «Սիսթրան» ծրագրիչը, որ տեղադրուած է համացանցի [www.systransoft.com](http://www.systransoft.com) հասցեով կայքին վրայ:

«Սիսթրան»ի միջոցով կայքեր թարգմանելու համար այցելել համացանցի վերննշաղկ կայքը եւ կայքի զլխավոր էջին վրայ տրամադրուած ցանկէն ճշդել, թէ ո՞ր լեզուէն եւ ի՞նչ լեզուի պէտք է կատարուի թարգմանութիւնը: Ապա՝ «translate now» տուփիկին մէջ տեղադրել հասցէն այն կայքին, զոր հարկ է թարգմանել, եւ «քլիք» ընել «translate» կոճակը: Պիտի պարզուի նոր էջ մը, ուր կ'երեւի խնդրոյ առարկայ կայքին պարունակութիւնը, թարգմանուած՝ ձեր փափաքած լեզուին:


Համացանցի վրայ գործող թարգմանական բոլոր ծրագրերուն նման, «Սիսթրան» եւս ի վիճակի չէ հարել առ հարիւր ճշգրիտ թարգմանութիւններ կատարելու, սակայն անոր թարգմանութիւնը ընդհանուր առմամբ կը պահէ ընդգրկին միտք բանին:

## ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային)՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

## ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԼՄԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ԵՐԵՒՈՅԹԸ

Այսօր, համացանցի միջոցով երաժշտական «Էմ.Փի.3» ֆայլերու փոխանակումի երեւոյթին ընդհանրացումէն քանի մը տարի ետք, սկսած են ժողովրդականութիւնը գտնել համացանցով ֆիլմեր եւ հաղորդաչափեր փոխանակելու ձեւերը, որոնց շնորհիւ նորագոյն ֆիլմերէն մինչեւ շարժապատկերի պատմութեան հանրածանօթ կամ նուազ ծանօթ ֆիլմերը կարելի է արձանագրել համակարգիչին մէջ, ապա՝ դիտել զանոնք համակարգիչին կամ պատկերասփիւռին վրայ:



Նախորդ տարիներուն համացանցին ֆիլմեր արձանագրելու գաղափարը խոչընդոտող զլխավոր


գործօնը ֆիլմերու ֆայլերուն ծաւալն էր: Համացանցին ֆիլմ մը արձանագրելը յաճախ երկար ժամեր, իսկ երբեմն այս հիասթափութիւն կը պատճառէր արձանագրողին:

Սակայն, համացանցի արագութեան բարելաւումով, ինչպէս նաեւ ֆիլմերու ֆայլի փոխանակելու առիթը ստեղծող համակարգչային ծրագրերու եւ համացանցի կայքերու շնորհիւ, այսօր ֆիլմեր արձանագրելու երեւոյթը սկսած է լայն թափ ստանալ: Բարար է քեյպլըով կապուած ըլլալ համացանցին (ընդհանրաբար հեռաձայնային կապը շատ աւելի ծախս կ'ենթարկէ) եւ կարելի է համացանցին ձրիօրէն արձանագրել նորագոյն ֆիլմերը՝ օգտագործելով «Մորֆէ-Ջիւս» (www.musiccity.com), «Պեթշէր» (www.bearshare.com) եւ «Լայւմ Ուայր» (www.limewire.com) ծրագրերը:

Օրուան որեւէ ժամուան «Մորֆէյը» ծրագրիչը շուրջ մէկ միլիոն օգտագործողներ կապուած կ'ըլլան համացանցին եւ կարելի է այդ անձերուն համակարգիչներուն մէջ փնտրել որեւէ ֆիլմ կամ հաղորդաչափ եւ արձանագրել տեղոյն վրայ:

